# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

14 հուլիսի 2022 թ

*N 741*

«ՎԱՅՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ Հ/Մ
ՏՆՕՐԵՆ՝ Ա. ՎԱՆՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագրի միակողմանի լուծման մասին

04.10.2021թ. կնքված ԼՄԳՀ ԳՀԱՇՁԲ 21/07-02 ծածկագրով պայմանագրի/այսուհետ՝ պայմանագիր/ 8.15 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կապալառուն համաձայանգիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայանագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծարվում է»:

Գյուլագարակի համայնքապետարանի կողմից 04.05.2022թ համաձայնագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկվել «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ի էլեկտրոնային հասցեին, սակայն Ձեր ընկերության կողմից առ այսօր չի ներկայացվել համաձայնագիր:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 8.15 կետը՝ Գյուլագարակի համայնքապետարանը միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն պայմանագրի կատարման և որակավորման ապահովման տուժանքի մասին համաձայանագրերի 1.3 կետերի՝ նշված համաձայնագրերը կից վճարման պահանջագրերով կներկայացվեն Ձեր ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները գանձելու նպատակով և կնախաձեռնվի «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական գործընթաց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ